

ՀՐԱՒԷՐ ՏԱՐԵԿԱՆ ԺԽԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

ՍՈՒԻՐԻ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Որ տեղի պիտի ունենայ Կիրակի Փետրուար 20, 1966 կ. ե. ժամը 2.00ին
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՆԴԻՍԱՍՐԱՀԻՆ մէջ:

Ժողովէն առաջ ԵԿԵՂԵՑԱՏԵՐ ՏԻԿՆԱՆց ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ պիտի սպասարկուի
ԿԵՍՈՐՈՒԱՆ պուտֆէ ճաշ:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Աղօթք եւ բացում:
2. Ընտրութիւն Տարեկան ծխական ժողովի Դիւանին:
3. Ընթերցում նահորդ Տարեկան ծխական ժողովի Ատենագրութեան եւ¹ Վաւերացում:
4. Հայց ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՐԻՄԱՍԱՐԴԱԳ Կազմակերպութեան գեկուցում:
5. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ Ամսաթերթի խմբագրութեան գեկուցում:
6. Դպրաց Դասու Միութեան գեկուցում:
7. Հարցեր գրաւոր ներկայացուած տեղեկագիրներու շուրջ:
8. Նկատառում ու քուէարկում 1966 տարւոյ պիւտմէին:
9. Նոր հարցեր:
10. Ընտրողական Յանձնախումբի տեղեկատուութիւն:
11. Ընտրութիւն Քուէակիոյ Յանձնախումբի:
12. Ընտրութիւն ծխական նոր հուրդի երեք ղաղաքեալ եւ մէկ հրաժարեալ
անդամներու տեղ նոր անդամներու:
13. Աղօթք եւ փակում:

Հովիւ եւ ծխական առոր հուրդ

ANNUAL PARISH ASSEMBLY OF

HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH

Sunday February 20, 1966 at 2.00 P.M. oin the Parish Hall.

It is requested from dues paying members of the Church to pay
their 1965 parish dues prior to the start of the Parish Assembly
to be able to exercise their franchise.

Pastor and Parish Council

*Prior to the Parish Assembly Ladies Auxiliary will prepare and
serve luncheon.

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ,
Տէր, եւ զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ.

Իմաստութիւն Հօր Յիսուս տուր մեզ
իմաստութիւն, զբարիս խորհել եւ խօսել
եւ գործել առաջի քո յամենայն ժամ,
ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց
փրկեա մեզ: Եւ ողորմեա քո արարածոց
եւ մեզ բազմամեղաց:

Lord, may Thy loving favor rest
upon us, and proper all the work
we undertake.

O Jesus, wisdom of the Father,
grant us wisdom, that we may
always think, speak, and do
that which is good in thy sight;
save us from evil thoughts, words
and deeds. Have mercy upon Thy
creatures and upon me, a manifold
sinner.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

էջ

Տեղեկագիր Հոգեւոր Հովիւ Հայր Ժիրայր Թաշմեանի	1-4
Զեկոյց ծխական Խորհուրդի Ատենապետ Պր. Յակոբ Թօսունեանի	5
Տեղեկագիր Եկեղեցասէր Տիկնանց Սիութեան	6
Տեղեկագիր Հայր. Եկեղ. Կիրակն. Դպրոցի	7
Տեղեկագիր Ս. Սահակ և Ս. Մեսրոպ Ազգ. Վրժ. ի	8-9
Զեկոյց Թեմական Պատգամաւորական ժողովի	10
Ելեւմտական Հաշուետուութիւն Եկեղ. Տիկն. Սիութեան	
Ելեւմտական Հաշուետուութիւն ծխական Խորհուրդի	

ՀՈՎԻԻ ԺԻՐԱՅՐ ԱԲԵՂԱՅ ԹԱՇՏԵԱՆԻ 1965 ՏԱՐՈՒԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Սիրելի ծիականներ,

Աստուծոյ ողորմութեամբ ու Զեր քոլորին Եկեղեցանուէր գործակցութեամբ ահա տարի մը եւս կը քոլորինք մեր զաղութային Ազգային-Եկեղեցական կեանքէն ներս:

Այն օրէն ասդին երբ Հայց. Առաք. Եկեղեցւոյ հիմերը դրուեցան Գանա տայի այս հիւրընկալ ափին վրայ, այդ օրէն ասդին այս վայրը դարձաւ իրաւ փարոսը մեր հայ հաւատքին ու Ազգային ներշնչման, լոյս ու ջերմութիւն տալով զալիք տարիներու մեր երազներուն ու մաքառումներուն:

Անցնող տարիները արդարեւ մեզի համար հեշտ ու սահուն տարիներ չեղան, այլ օրէ օր առաւել ծիգ ու քրտինք ապառեցին, ազնուական հայորդիներէն, որոնք զիտցան ցերեկը զիշերին խառնելով, իրենց զոհողութեան ու նուի րումի լայն քաժինը քերել. Հայց. Առաք. Եկեղեցւոյ առաւել պայ ծառացման ու քարգաւաճման:

Տար Աստուած մեզ քոլորիս առաւել շնորհք ու իմաստութիւն մշտնջենաւորելու մեր անկորնչական ժառանգութիւնը, ու օրըսթօրէ առաւել պայ ծառացընելու ու շէնցնելու մեր բարոյական ու հոգեւոր հայրենիքը, որ է Հայց. Առաք. Ուղղափառ Եկեղեցին:

Անցնող տարուան ընթացքին ամէն Կիրակի ու տօնական օրերուն Սուրբ Եկեղեցւոյս մէջ պաշտուեցան Եկեղեցական արարողութիւնք եւ Ս. Պատարագի մատուցումներ, բացի այն պարագաներուն երբ մեր քաղաքէն բացակայութիւնը անհրաժեշտ տեսնուած է, որ է ըսել Տարեկան Թեմական Պատգամաւորական ժողովին եւ Հ. Ե. Կ. Եան տարեկան համագումարին առիթներով:

ԱՅՑԵԼՈՒԹԻԻՆՆԵՐ.— Անցնող տարուան ընթացքին ընդունեցանք այցելութիւնները հետեւեալ Բարձրաշնորհ ու Հոգեշնորհ Հայրերուն ու Եղբայրներուն:

ա. Հայկական Ս. ծննդեան տօնին առիթով Թեմիս քարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Սիրոն Ս. Արք. Մանուկեանի, Եպիսկոպոսական հանդիսաւոր

Ս. Պատարագի մատուցմամբ ու Կենաց Բանի քարոզութեամբ:

բ. Կրօնական Դաստիարակութեան ամսուան առիթով Սարտ 14, 1965

Առաջնորդական փոխանորդ Հոգշ. Տ. Եղիշէ Վրդ. Կիզիրեանի, Կենաց Բանի քարոզութեամբ:

գ. Սրբոց Թարգմանչաց տօնին առիթով Թուլիս 11, 1965 Ս. Եկեղեցւոյս նախկին Հոգեւոր Հովիւ Հոգշ. Տ. Վազգէն Վրդ. Թաղոյեանի, Ս. Պատարագի մատուցմամբ ու Կենաց Բանի քարոզութեամբ:

դ. Օգոստոս 29, 1965 Կիրակիին, Հիւսիսային Ամերիկայի Համաթեմական ՄԱՅՐ ՏԱԶԱՐԻ ՇԻՆՈՒՅՆԱՆ Վարէշ Հարտուղար Արժանաշնորհ Տ. Լեւոն Քահանայ Առաքելեանի, Ս. Պատարագի մատուցմամբ ու Կենաց Բանի քարոզութեամբ:

ե. Նոյեմբեր 4, 5, եւ 6 օրերուն Ս. Եկեղեցւոյս ու գաղութիս համար եղաւ իրապէս պատմական օրեր, շնորհաբեր այցելութեամբը Կ. Պոլսոյ եւ Թիւրքիոյ Հայոց ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՊԱՏՐԻԱՐՔ ՇՆՈՐՀՀՅ ՍՐԲԱՁԱՆ ՀՕՐ, որուն ներկայութիւնը մեզ ոգեւորեց ու մխիթարեց մեր ազգային ու Եկեղեցական խանդավառութեամբ:

Պարտք կը զգանք մեր Խորին շնորհակալութիւնը յայտնել Ս. Եկեղեցւոյս Մրբազան ժամապաշտութիւնը ներդաշնակ երգեցողութեամբ ապահովող Դպրապետին Տիրացու Մինաս Սէլեանին, Սարկաւազաց ու Դպրաց Դասերու անձնուէր անդամներուն, որոնք ինչպէս միշտ այս տարի եւս շարունակեցին իրենց անսակարկ նուրիրումը բերել Ս. Եկեղեցւոյս պայծառութեան:

ՃԻՍԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ.— Անցնող տարուան ընթացքին Ս. Եկեղեցւոյս մէջ կատարուած են 13 Սկրտութիւն եւ Դրոշմ հետեւեալ երախաներու:—

1. ԼՈՒՍԻԿ ՎԱՐՈՒԹԱԾԻ ՕՐՏՈՒՊԷԿԵԱՆ ՀԱՄԲԻԼԹԸՆՔՆ:
 2. ՅՈՎՀԱՆՆԵՍ-ՎԻԳԻՆ ԶՈՀՐԱՊԻ ՏէՐ ՄԿՐՏԻՉԵԱՆ ԹՈՐԱՆԹՈՅՔՆ:
 3. ՅԱԿՈԲ ԳԵՂԱՄ-ԱՐՄԵՆԱԿԻ ՏէՐ ՅԱԿՈԲԵԱՆ , ,
 4. ՄԻՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ ՀԱՄԲԱՐԵԱՆ , ,
 5. ՄԻԼՎԱ-ԳԱՐԵԼԻՆ ՀԱՅԿԻ ԶՈՒԼԱԼԵԱՆ , ,
 6. ՊԵՎՃՐԼԻ-ՃԻՆ ՎԱՐՈՒԹԱԾԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ , ,
 7. ՌՈԲԵՐԴ ՃՈՐՃԻ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ , ,
 8. ԱՐԱ ՄԻՍԱՔԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՀԱՄԲԻԼԹԸՆՔՆ
 9. ՀԱՅԿ-ՃՈՆ ՄԱՐԹԻՆԻ ՄԵՐՈԲԵԱՆ ԹՈՐԱՆԹՈՅՔՆ
 10. ՅՈՎԱԿԻՓ ՆՈՐԱՅՐԻ ՏէՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ , ,
 11. ՏԻԱՆԱ ՎԱԶԳԻՆԻ ՏէօՐՍէՃԵԱՆ , ,
 12. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՆՈՒԵԼԻՀԻՒՐՄԻՒՋԵԱՆԻ , ,
 13. ՔՐԵՏԵՐԻԶ ԵԴՈՒԱՐԴԻ ԲԱՐՄԱՔՍՃԵԱՆ , ,
- 9 Ճիւականներ գտան իրենց յաւիտենական հանգիստը.—

1. Գալայ ճեան Յակոբ
2. Եղեկիէ լեան Եղնիկ
3. Գույումճեան Պետրոս
4. Յովհաննէսեան Վահան
5. Մշիկեան Հայկուհի
6. Խանանեան Հեղինէ
7. Հայրապետեան Արաքսի
8. Մարտիկեան Պետրոս
9. Ֆերմանեան Հայկ

Հետեւեալ 9 զոյգերը Ամուսնութեան Ս.Պատկի Խորհուրդին արժանացան.—

1. Տէր և Տիկ. Սարգիս Տեւ Արմինէ Տէմիրճեան
2. Տէր և Տիկ. Յակոբ Եւ Մարի Աշճեան
3. Տէր և Տիկ. Պրակ Եւ Զուարթ Կրէնթ
4. Տէր և Տիկ. Մարտիկ Եւ Մարգրիթ Փափազեան
5. Տէր և Տիկ. Սեղրակ Եւ Ալիս Զարուկեան
6. Տէր և Տիկ. Ռոստոմ Եւ Անահիտ Տէր Մկրտիչեան
7. Տէր և Տիկ. Մովսէս և Սոնիա Ղազարեան
8. Տէր և Տիկ. Ֆղուարդ և Աղաւնի Էռեմիշլեան
9. Տէր և Տիկ. Քրիստափոր և Լուսի Զաքմաքեան

Վերոյիշեալ ցանկերը իրենց լիակատար արժանագրութեամբ պահուած են Եկեղեցւոյս Խորհրդակատարութեանց տոմարին մէջ:

Ծննդեան և Զատկի տօներուն առիթով շարունակած ենք ՏՆՈՐՀՆԵՔԻ այցելութիւններ տալ մեր համայնքի ընտանիքներուն, անոնց տանելով Հայց. Եկեղեցւոյ Օր Խորհրդիւններն ու բարեմաղթութիւնները:

Մեր ծուխի ընտանիքներուն կարգին ու Եկեղեցւոյս ծխական Խորհրդին հետ համախորհուրդ, շարունակած ենք այցելութիւններ տալ նաեւ շրջակայ գաղութներուն, ի մասնաւորի Համիլթընի փոքրաթիւ գաղութին, պարբերաբար Ս.Պատարագի մատուցմամբ միհիթարելով մեր եղբայրներն ու քոյրերը: Այս առթիւ կրկին անգամ պարտք կը զգանք շնորհակալութիւն յայտնել բոլոր այն ազնիւ հայորդիներուն, որոնք ընկերացան մեզի մեր առաքելական այցելութեանց, իբր Դպիր Եւ Սարկաւագ իրենց ծառայութեան բաժինը բերելով:

Ձանացած ենք ըստ կարելւոյն Եւ ըստ պատշաճի այցելութիւններ տալ ծուխիս հիւանդներուն, հիւանդանոց կամ տունը, ցաւակցական, վարչական Եւ կոթական գործերով, օտար Եկեղեցիներու հոգեւոր պաշտօնակիցներու, Ողջերթի, Մկրտութեանց Եւ Պակաղրութեանց Եւ այլ զանազան ընկերային հաւաքոյթներու առիթներով:

ԳՐԱԾԵՂԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔ.— Որքան որ մեր տկար ուժերը կը ներէին շարունակեցինք հրատարակել երկու շաբաթ անգամ մը Եկեղեցւոյս ԼՐԱՏՈՒ ԵԿԵՂԵՑԻՈՅ ծխաթերթիկը որ Եւ սակայն մեր կամքէն անկախ պատճառներով դադրեցուցինք հրատարակումը սպասելով այն երանելի օրուան երբ գաղութս ձեռնտու կ'ըլլայ գոնէ իր բարոյական քաջալերութիւնը տալ, մասնաւոր ՄԱՐՄՆԻ մը միջոցաւ վերստին ի լոյս ընծայելու, այդ կերպով միշտ սատարած ըլլալու համար ՀԱՅ Գիրին ու ՍԱՍՈՒԼԻՆ: մեր գաղութային կեանքէն ներս:

Ձանացած ենք կանոնաւոր կերպով թղթակցութեամբ կապ հաստատել մեր Թեմի Առաջնորդարանին հետ, անկէ Եկած Առաջնորդարանի հրահանգներու գործադրութեան համար: Ծնորհակալութիւն նաեւ բոլոր այն ազնիւ անձերուն, որոնք օգնեցին մեզ մեր գրասենեկային աշխատանքներուն մէջ:

Անցնող տարուան ընթացքին եւս շարունակուեցաւ ստուարացումը մեր համայնքին, նորանոր հայ ընտանիքներով ու անհատներով, որոնք յաղթահարելով ամէն դժուարութիւն, եւ շնորհիւ իրենց ձեռներեցութեան, կը ջանան իրենց խաղաղ ու ապահով նոր կեանքը կերտել իրենց որդեգրած այս նոր հայրենիքին մէջ, միեւնոյն ատեն չմոռնալով երբեք իրենց հայրերուն հաւատքն ու Ազգասիրական ոգին:

Ի վերջ բանիս այսու մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք Ս. Եկեղեցւոյս Պատուարժան ծխական Խորհուրդի յարգոյ եւ սիրելի անդամներուն եւ իրենցմով գլխաւորուած մեր քոլոր Եկեղեցապատկան մարմիններուն, որոնց քոլորին միակամ ու համերաշխ գործակցութեամբ, խաղաղ ու յաջող տարի մը քոլորած ըլլալու հոգեկան գործունակութիւնը ունեցանք:

Կը մաղթեմ Ձեզ քոլորիդ առողջութիւն ու յաջողութիւն, նոյն ոգիով ու պայծառ տեսիլքով միշտ վառ պահելու հայուն Լուսաւորչի Կանթեղը այս հիւրընկալ ափին վրայ:

Սիրոյ ողջոյնիւ
Ժիրայր Աբեղայ Թաշճեան Հովիւ

ԶԵԿՈՅՑ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ 1965

Յարգելի անդամներ,

Երբ տարի մը առաջ մեզի վիճակութցաւ ծխական խորհուրդիս Առենապետութեան աթոռը, մեր մտքին մէջ ունէինք մէկ ու ղեցոյց միայն, որն էր տարի մը ամբողջ զաղութս պահել խաղաղ մթնոլորտի մէջ, առիթ չտալով մէկուն կամ միւսին, վերարծարծելու հարցեր որոնք պէտք է որ մոռացուէին եւ մոռացութեան հետ հաշտարար մթնոլորտ մը ստեղծէին:

Թէեւ մթնոլորտը պատրաստ է, եւ կրթերը նուազ, որմէ յառաջ պէտք է զայ ոգի մը ի նպաստ մեր եկեղեցւոյ բարելաւման եւ աշխատանքի, մեր զալիք սերունդներու բարօրութեան համար, կը տեսնուի կրաւորական ընթացք մը երկու հոսանքներու կողմէ, մին նոյնքան անօգուտ ինչպէս միւսը, եւ անօգնական մեզի որոնց պէտքն ունէինք յաջողցնելու ամէն եւ որ եւէ ձեռնարկ: Եթէ կարողացանք ընել կարգ մը աշխատանքներ, ըրինք զանոնք անտանելի եւ բացարձակապէս առանձինն մնացան շրջանակի մը մէջ: Եթէ մեզմէ շատ բան կը սպասուէր, կարելի է սպասել, միայն այնքանը՝ որքան գլուխէ մը կը սպասուի, առանց ունենալու իր մարմնի մնացած անդամները:

Հակառակ այս իրականութեանց, բոլոր անցուղարձերէ որոշ չափով տեղեակ էք, եւ եթէ միաժամանակ նկատի առնէք մեր Գանձապահի Հաշուեկշիռը, որոշ է որ եղած են բաւականաշախ աշխատանքներ որոնք թէեւ չեն գոհացներ ինձ եւս, միանգամայն կարելի չէ ալ չգնահատել:

Այսու մեր աթոռը պարապ կը թողունք առիթ տալու անձի մը որը կարենայ այս զալիք պատեհ շրջանը կաւագոյնս գործածել: Տրամադրելով նաեւ մեր ընկերակցութիւնը, իր յաջողութեանը համար:

Այս երկու անցնող տարիներու ընթացքին, դժբախտաբար կորսնցուցինք մեր անդամներէն մի քանին, որոնք ըլլայ Ձեզի եւ ըլլայ մեզի սիրելի էին: Ըլլալով մենք եւս մահկանացուներ, իմ խնդրանքս այդ պիտի ըլլաթ, որ անոնք որոնք կը բաժնուին մեզմէ, ունենան Քրիստոնէական անդորրութիւնը իրենց հոգիներուն մէջ տեսնելով զաղութ մը յւշ Լերան Քարոզի պատգամները կ'իրագործուէին ի շահ Գանատահայ եւ Քրիստոնեայ համայնքի:

Զերդ անկեղծօրէն

Յակոբ Թօսունեան Առենապետ

ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՏԵՂԵԿԱԳԻՐ 1965

ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆԸ 1965 ՄԱՐԴՈՅ ԸՆԹԱՁՐԻՆ ՈՒՆԵցած
է 56 անդամունիներ:

Վարչութիւնը ունեցած է Տիկին Սօնա Թորոսեանը իբրեւ Ատենապե
տունի եւ 5 վարչական անդամունիներ ու մէկ պատրոյ նախագահունի:

Միութիւնը ունեցած է 5 վարչական ժողով եւ մէկ ընդհանուր
ժողով, նախագահութեամբ հոգ. հովիւ Հայր Ժիրայր Թաշճեանի:

Ինչպէս նախորդ տարիներուն այս տարի եւս Տիկին Շաքէ Ցովհաննէս
եան սիրայ օժար յանձն առած է պատրաստել Ս.Պատրագի Մասը:

ԶԵՐՆԱՐԿՆԵՐ.— 1965 տարուան ԸՆԹԱՁՐԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՈՒՆԵցած է հետեւեալ

ՃԵՌՆԱՐԿՆԵՐԸ.—

1. Միջինքի Սեղան,
2. Հաւկթախաղի Սեղան,
3. Մատաղաբաշխութիւն,
4. Թէյասեղան ի պատիւ նախորդ Վարչութեան անդամունիներուն,
5. Զքուսապտոյտ,
6. Տարեկան Պազար,
7. Հնդունելութիւն Կ.Պոլսոյ Ամենապատիւ Շնորհը Սրբազն Պատրիարք
Հօր ի պատիւ:

ՆԻՒԹԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.— Միութիւնս իր կարելիութեան սահմանին նիւթական
օժանդակութիւններ կատարած է եկեղեցւոյս ծխական դպրոցներուն, ինչպէս նաեւ
տեղւոյս Միջազգային Կարմիր Խաչին, եւ չանցած է նիւթապէս եւ բարոյապէս
զօրավիգ կանգնիլ Ս.Եկեղեցւոյս ծխական խորհուրդին:

ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆԸ իր խորին շնորհակալութիւնները
կը յայտնէ Միութեանս Պատուոյ Ատենապետունի Ազնիւ Տիկին Հելէն Ունծեանին,
որ սիրայ օժար յանձն առած է Ս.Սեղանի ծածկոցներու մաքրութեան, ինչպէս նաեւ
Պարոն Ցովսէփ Դաւիթեանին, որ ինչպէս միշտ այս տարի եւս յանձն առաւ ճաշի
սեղաններու ծածկոցները ճրիաբար լուալու ու արդուկելու:

Շուշան Տէիրմէննեան
Քարտուղարունի
ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԱՅՑ. ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿԻՆՈՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հայց. Առաք. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցը երկար ատեն փակ մնալէ վերջ, շնորհիւ գաղութիս Հոգ. Հովհանն Հայր Ժիրայր Աբեղայ Թաշճեանի եւ պատուարժան ծխական խորհուրդի անդամներու աշխատանքին վերաբացուեցաւ Հոկտեմբեր 1 Կիրակի օր, հրաւիրուած էր Յ ուսուցիչ եւ 1 ուսուցչուհի, որոնք կանոնաւոր կերպով կը շարունակեն Հայ Մանուկներուն տալ Կրօնաբարոյական Դաստիարակութիւն։ Ունինք շուրջ 35-40 աշակերտ-աշակերտուհիներ, բաժնուած երեք կարգերու։ Ամէն Կիրակի կանոնաւոր կերպով կ'ուսուցուի Աղօթքներ, Մաղթանքներ, եւ Շարականներ, կը պատմուի բարոյալից պատմութիւններ։

Ուսուցչական Կազմս ունեցած է իր հերթական ժողովները, եւ առաջին ժողովին իսկ կազմած է իր Դիւանը, Տեսչութեամբ ժան Նահապետեանի, Գանձապահ-Աստենաղպրութեամբ Օրդ. Այտա Շիշմանեանի։

Կաղանդի առթիւ նուէրներ բաժնուեցան աշակերտներուն, որուն ծախսը տրամադրուեցաւ ծխական խորհուրդի մօտ պահ ղրուած Դպրոցիս գանձէն։

Հայց. Առաք. Եկեղ. Կիրակն. Դպրոց

Տեսուչ
Ժան Ն. Նահապետեան

Ս. ՄԱՀԱԿ ԵՒ Ս. ՍԵՍՐՈՊ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Վարժարանին ներկայ տարեշրջանը բացառիկ է քանի մը տեսակէտերէ։ Նաև առաջին անգամ ըլլալով փորձը կատարուեցաւ դասաւանդութիւնները կատարել վարծուած շէնքի մը մէջ։ ծնական հոր հրդի նախածեռնութեամբ կարգադրուեցաւ, որ մարժարանը վոհնաղորուի ամէն շաբաթ օր ժամը 10-էն 12.30 քաղաքիս քանատական դպրոցներէն Պանուարըն Սքուլի մէջ։ Կոմիլի կարգադրութիւն մըն էր որմէ կրնար օգտուիլ հայ համայնքը եթէ դէպօերը այլ ընթայք չառնէին։ Վարծուած էին 8 դասարաններ առաւել պարբերաբար մեզի տրամադրուած երգաստան մը ուր աշակերտները կ'ունենային պատշաճ գրասեղաններ եւ դպրոցական մշնոլորտի մը առաւելութիւնները։ Սակայն դժբաղդարար այդ շէնքը մնաց օտար մեզի համար, և մանաւանդ անոր վերակացու հսկիչին ունեցած անգարեացակամ կեցուածքը պատճառ եղաւ, որ փոխանակ տեղի տալու յաճակակի կրկնուած անհործ և կասկածելի ծշղութեամբ դիտողութիւններու, դասաւանդութիւնները դադրեցուին այդ շէնքին մէջ և վարժարանը կրկին փոխաղորուի մեր սեւական յարկին, եկեղեցիի սրահին մէջ։ Այժմ սրահին և յարակից սենեակներու կարելիութիւնները ի լրիւ գործածելով դասերը կանոնաւոր կերպով կը շարունակուին։ Վստահ ենք, որ շուտով կ'իրաւանանայ ամէն հայու երազը — ունենալ իր սեւական շէնքը որպէսզի մեր մատաղ սերունդին հայեցի դաստիարակութեան գործը կատարուի արժանավայել կերպով։

Երկրորդ բացառիկ երեւոյթն է մեր աշակերտութեան թիւին անհամեմատ ամը. մինչ նախորդ շրջանին այդ թիւը եղած էր շուրջ 70, այս տարի արծանագրուած են 115 աշակերտներ։ Ասոնցմէ 54 մանչ և 61 աղջիկ բաշխուած են մանկապարտէգի երեք, նախապատրաստական մէկ և նախակրթարանի հինգ դասարաններուն մէջ։ Ուսուցչական կազմը բաղկացած է հիտեւեալ ազգայիններէն։

Ծնօրէն — Պրն Յակոբ Պալեան,

Նախակրթարան — Տիկ. Տիգրանուհի Արթինեան

Պրն Կարօ Տէիրմէննեան

Պրն Քրիստ. Չարմաքեան

Օր Սարի Դասիէլեան

Նախապատրաստ. — Տիկ. Շաքէ Արթինեան

Նանկապարտէգ — Օր. Նորա Շահմէնիրատ

Տիկ. Սիւզան Ղուկաս

Օր Սօնա Խոնկանեան

Տիկ. Արփինէ Մերաս.

Երգի և Երաժշտութեան ուսուցչուհի Տիկ. Արաքսի Գասարճեան

Հայոց Պատմութեան և Հայաստանի Աշխարհագրութեան ուսուցիչ Պրն Հ.

Տիլանջեանի քաղաքէս անակնկալ մեկնումին պատճառով սոյն դասերու աւանդումը ստանծնած է Հովհիւ Հայր Ժիրայր Թաշճեան որը նոյնպէս կը ղեկավարէ վերին դաստիարաններու երգի ուսուցումը։

Ուսուցչական այս կազմը կը ջանայ իր լաւագոյնը ընել այս դժուարին գործը կատարելու համը և ասիկա առանց ամենաղոյզն նիւթական վարժատրութեան։ Այս անփոխարինելի գոհաբերութիւնը կը կատարուի ազգին զաւակներուն նկատմամբ այն հաստատ համոզումով։ թէ ծնողները գորավիզ պիտի կանգնին վարժարանին մէջ սկսուած գործին և իրենց բովանդակ աշակցութեամբ այդ գործը պիտի դարձնեն արդիւնաւէտ։ առանց այս աշակցութեան ապարդիւն կը մնայ վարժարանին գործը հայեցի դաստիարակութեան մէջ։

Վարժարանս կ'օգտագործէ այժմ 5 փոխաղորդ ինքնաշարժեր որոնցմէ կ'օգտուին 65 աշակերտներ։ Դպրոցական թօշակ չի զանձուիր, այլ միայն արծանագրութեան չնչին գումար մը, 5 տոլ. ։ իսկ ինքնաշարժով փոխաղորուողէ կը զանձուի տարեկան 20 Տոլ. մինչ իւրաքանչիւր աշակերտի ծախսն է առնուազն 55 Տոլ. Այս տարեշրջանին զանձուած է մինչեւ հիմա 1220 Տոլ. իսկ զանձելի կը մնայ մօտ 600 Տոլ.։

Յանձնարարելի է, որ կրթական թօշակի սակը բարձրացուի, իսկ վճարումները կատարուին աւելի կանոնաւոր կերպով և յաճախակի — ամսական կամ եռամսեայ: Նման գոհողութիւն մը իման պիտի ըլլար հանրութեան լայն շրջանակի մը աւելի մօտէն հետաքրքրութելու դպրոցին մէջ կատարուած աշխատանքին և մղալու իրենց զաւակները աւելի լրջութեամբ և սիրով սերտելու իրենց հայերէնի դասը:

1966 ի ամանորին տեղի ունեցաւ վարժարանիս աւանդական կաղանդապայի հանդէսը որ առիթ տուաւ ծնողներուն աւելի մօտէն տեղեակ ըլլալու դպրոցէն ներս կատարուած աշխատանքին: Նոյնպէս իւրաքանչիւր աշակերտ ստացաւ սիրուն նուէր մը:

Յունականէս երեք ամիս առաջ ունեցանք այցելութիւնը Ամերիկայի Ազգ. Առաջնորդարանէն կրթական տեսուչ Պրն Մրտաշէս Սկրտիչեանը, որը իր հիացումը յայտնեց վարժարանէն ներս տիրող կացութեան մասին և յանձնարարած որ միջոցներ ձեռք առնուին հիմնելու համբ հայ ամեն օրեայ դպրոց մը, հոստանալով որ այդ հարցը պիտի տարուի Պատգամաւորական ժողովին եթէ այս ուղղութեամբ ոնէ դիմում կատարուի Պատկ. ծիական ժողովին կողմէ:

Նոյնպէս ունեցանք շնորհաբեր այցելութիւնը Թիւրքիոյ Հայոց Պատրիարք Ամեն. Տէր Շնորհը Սրբ. Հօր որ իր օրնութիւնը տուաւ Վարժարանիս աշակերտութեան և Ուսուցչական կազմին:

Սահմանադրութիւնը յաջողութիւններ մեր սիրելի Վարժարանին,

Ս. ՍԱՀԱԿ ԵՒ Ս. ՄԱՍՐՈՊ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆ

Գետր. 1966.

Տնօրէն

Յակոբ Տ. Պալեան

ԶԵԿՈՅՑ ԹԵՍԱԿԱՆ ՊԱՏԳԱՍՏԻՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ 1965

1965 տարւոյ թեմական Պատգամաւորական 63րդ Տարեկան ժողովը

գումարուեցաւ Մայիս 13-15 օրերուն, Ուստի ֆիլատելֆիոյ Ս. Սահակ և Ս. Սեւրոպ նորաշէն եկեղեցւոյ մէջ, նախազահութեամբ թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Սիոն Ս. Արք. Մանուկեանի, եւ մասնակցութեամբ թեմի 146 հոգեւորական աշխարհական պատգամաւորներու:

Ժողովի կարեւոր նիւթերու կարգին մանրամասն ու լիակատար տեղեկութիւններ տրուեցան թեմի ՄԱՅՐ ՏԱՁԱՐ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ Յանձնաժողովին կատարած աշխատանքներուն մասին եւ միաձայնութեամբ որոշուեցաւ իրաւասութիւն տալ Յանձնաժողովին որպէսզի ի հարկին 1.500.000.00 տոլարի փոխառութիւն կատարէ, արագ թափով ի գլուխ հանելու համար Ամերիկահայութեան երկար տարիներու երազը եղող Մայր Տաճարի ու Մշակութային Կեդրոնի շինութիւնը:

Ժողովը որոշեց նաեւ նկատի ունենալով թեմի ընդարձակ տարածութիւնը եւ գործերու բազմազանութիւնը, որոշեց Միտք Ուսթի եւ Գանատայի շրջանի համար նշանակել Առաջնորդական փոխառողջութիւն մը, յատկացնելով 7000.00 տոլարի գումար մը, կեղրոն ունենալով Տիթրոյթ քաղաքը:

Ժողովը որոշեց յանձնարարել Առաջնորդ Սրբազանին եւ թեմական Խորհուրդին մեր թեմի Հայ Դպրոցներու կրթական եւ տնտեսական վիճակի բարելաւման համար ապահովել Հայ կական Բարեգործական Ընդհանուր Միութեան գործակցութիւնը:

Ժողովը Առաջնորդարանի 1965 տարւոյ պիտմէ սահմանեց 102.000.00 տոլար, եւ կատարեց թեմական խորհուրդի մասնակի ընտրութիւնը:

ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՑԱԿՈՐ ԹՕՍՈՒՆԵԱՆ